

ները խզելուց յետոյ եւ նրա երկիւղից փախուստ տարով: Կային նաեւ ուրիշ դրամներ Սասանեանների շրջանից:

Շատ ուշագրաւ էին՝ Գաղղիայի եւ Պարսկաստանի մէջ տեղի ունեցած պատմական յարաբերութիւնների վերաբերեալ վաւերագրիչները, որոնց մէջ մանաւանդ՝ Իրանի վրայ իշխող Թուրանի՝ այն է թաթարական Սաների Գաղղիոյ թաղաւորներին դրած նամակների բնագիր, մէկը՝ Արդունի, որ գրուած էր 1289ին եւ միւսը Օլջայթուի (Oeldjaitou) 1305, որոնք յատուկ թաթար պատգամաւորներ Պարսիս են բերել: Հետաքրքրական էր նաեւ մի վիմագիր պատկեր, որ ցոյց էր տալիս թէ ի՞նչ մեծ շուքով Լուզովիկոս ԺԳ. 1715ին ընդունել է պարսից շահի դեսպանին:

Հարուստ էր նաեւ Իրանագիտութեան վերաբերեալ բաժինը, որից երեւում է, որ Եւրոպան շատ ուշ եւ շատ դանդաղ է սկսել ծանօթանալ Իրանական աշխարհին: Այս ծանօթութիւնը սկսում է Vincent de Beauvaisի Miroir historialից, տպ. 1469ին: Niebuhrի Արաբիայում եւ Հարաւային Պարսկաստանում կատարած ուղեւորութեան նկարագրութիւնը՝ Փրանսերէն թարգմանուելով տպուել է 1776—1780ին: Այս դրական աշխատութիւններից ղեկավարուելով համբաւաւոր արեւելագէտ Silvestre de Sacy մեկնարանել է Նաքշի-Ռուստամի արձանագրութիւնները:

Պարսկերէն լեզուի առաջին քերականութիւնը, կամ առաջիններից մին, տպուել է Փրանսերէն, Հոլլանդացում, Louis de Dieuի հեղինակութեամբ (ծն. 1590), որ դասախոսում էր Լէյդէնի համալսարանում: Մի ուրիշ քերականութիւն, լատիներէն գրուած, տպուել է 1639ին: Այս երկու քերականութիւններն են եղել պարսկերէն լեզուի ուսման առաջին ձեռնարկներն Եւրոպայում:

Իրանագիտութեան բուն ուսման եղել է հոչակաւոր գաղղիացի արեւելագէտը Անքետիլ-Դիւպերոն (Anquetil-Duperron, 1731—1805), որ առաջին անգամ ուսումնասիրել է Զրադաշտի Աւեստան, շնորհիւ այն բնագիրների եւ սանսկրիտերէնից կատարուած պարսկական թարգմանութիւնների, որ նա գտել էր Հնդկաստանում: Յոյց էին արուած այնտեղ Ձէնդ-Աւեստայի գրչագիր օրինակներ եւ թարգմանութիւններ:

Աւելորդ էմ համարում կանոց առնել այլեւայլ Եւրոպական լեզուներով երեւցած բազմաթիւ ուղեգրութիւնների վրայ դէպ ի Պարս-

կաստան, տպուած 1487ից սկսած, որոնք Յուցահանդէսում ընդարձակ տեղ էին գրաւել:

Յուցահանդէսի պատերը ծածկուած էին Ֆիրդուսիի հայրենիքը յիշեցնող աշխարհագրական քարտէսներով: Այս կէտում առաջնութիւնը Փրանսացիներին չէ պատկանել: արանց մասնակցութիւնը սկսում է միայն Փէղարից, յայտնի ուղեւոր Շարդէնից: Ուստի Библиотеке Nationale պատկուել է դիմել այս բաժնում Պորտուգալցի եւ Հոլլանդացի նաւագնացների, եւ Իտալացի դիւանագետների եւ ուսուցարների գործակալների աշխատութիւններին:

Հետաքրքրական էր մի Պորտուգալցի նաւագնացի կազմած քարտէսը, որ Եւրոպան էր ներկայացնում 1515ին եւ որի արեւելեան սահմանները նա տարել էր մինչեւ Կասպից ծովի եզրերը, Ապշէրոնեան թերակղզու ծայրը, եւ այդտեղ դրել էր մի մեծ կրակատուն¹, որի վրայ բոցն այնպէս էր փայլում, որ ինձ յիշեցրեց այդ տեղի (Բաքուի) նաւթահորերի հրդեհը...: Կասպից ծովի եզրերը ներկայացնող մի ուրիշ քարտէս էլ կար, որ մի Հոլլանդացի է գծել Carel van Werden անունով, 1721ին, երբ յատկապէս, Մեծն Պետրոս ուսական կայսեր յանձնարարութեամբ շրջել է այդ տեղերը: Մեծն Պետրոս այս քարտէսը նուիրել է Ազգային Մատենադարանին, ի յիտատակ իր Պարսիս այցելութեան:

Բոլոր այս հնօրեայ քարտէսների մէջ երեւակայութիւնն (fantaisie) էլ իր դերն ունէր: Եւրոպան այն ժամանակ միայն ճիշդ գաղափար է կազմել Իրանական աշխարհի մասին երբ լիովին պատրաստուած արեւելագէտներ գիտական նպատակով ուղեւորել եւ ուսումնասիրել են երկիրը:

Պարսիս այս Ֆիրդուսիական Յուցահանդէսը մի ուրիշ հետաքրքրական կողմն ունէր մեզ, հայերիս համար: Պահարաններից մէկում պատուաւոր տեղ էր գրաւել մի հին հայ հեղինակի երկասիրութիւնը: Hayton l'Armenien տիտղոսի տակ ցոյց էր արուած Կորիկոսի իշխան՝ Հեթում պատմիչի հեղինակութիւնը, լատիներէն գրուած 1350ին, որի գաղղիերէնը տպուած Պարսիսում 1517ին, հետեւեալ խորագիրն էր կրում. «Les fleurs des

¹ Քարտէսագրի այս տեղեկութիւնը շատ ճիշդ է այնտեղ, ուր այժմ Բաքուի համբաւաւոր նաւթային հանքերն են գտնուում, կրակատուններ եղել են շատ վաղուց, շնորհիւ այն բնական ստորերկրեայ գազի, որ հիմայ էլ արտահանում է եւ օդի մէջ բոցավառում:

Histoires de la Terre d'Orient, compilées par frère Hayton, seigneur du Kork, cousin Germain du roy d'Arménie»:

Շնորհիւ այն հանդամանքի, որ հազարաւոր եւրոպացիներ այցելել են այս Յուցահանդէսը, պարսիկ հանձարեղ բանաստեղծի ծանօթութիւնն եւ համբաւը տարածուել եւ ընդհանրացել է նաեւ ժողովրդական խաւերում:

ՍԱՐՈՒՆԱՆ



ՊՐՈՑ. ՅԱԿՈՒ ՄԱՆԱՆԻՆԱՆ, Ֆեոդալիզմի հայաստանում: Երևան 1935, 80, էջ 338: Գիճճ՝ 12 ո.: [Հրատ. Մեխոնեան Ֆոնդի, Թ. 19:]

Հայաստանի տնտեսական կեանքի կազմակերպութեան նուիրում է այս աշխատութիւնը: Պրոֆ. Մանանդեան ծանօթ է արդէն իւր պատմական, բանասիրական եւ հայ տնտեսական-քաղաքական պատմութիւնը շօշափող երկերով: Այս աշխատութիւնը հայերէն նորագոյն խմբագրութիւնն է հեղինակին «Заметки о феоде и феодалном войске Парфии и Аршакидской Армении», изд. Закафилиала Академии Наук, Тифлисы 1932) ուսերէն գործին:

Հայոց տնտեսական եւ քաղաքական կեանքի զարգացումը եւ անկումը ուսումնասիրելու համար անհրաժեշտ է անոր տնտեսական դրութիւնը լուսարանել: Ինչպէս ուրիշ ազգերու, նոյնպէս հայ աշխարհին մէջ իւր գործօն դերը կատարած է աւատական դրութիւնը (féodalité): Հեղինակը առաջին ուշադրութիւնը կը դարձնէ պարզել հին հայ նախարարական շրջանը, իբր աւատական դրութիւն իր էական եւ առանձնայատուկ գծերով: Նիւթի ծանօթութեան վկայ են ազգիւրները, գործնք գործածած է (11—24) աշխատութեանս մէջ: Թէ ի՞նչ է աւատականութիւնը ընդհանրապէս կը բացատրուին կազմակերպութեան էական եւ կարեւոր յատկանիշներով. որոնց մէջէն առաջին տեղը կը զրաւէ՝ մեծ կալուածատիրութիւնը եւ ազնուականութեան գերակշռող դերը: Այս մեծ հողատիրութեան հետ կապուած ըլլալով կառավարչական, դատական եւ նաեւ ուրիշ իրաւունքներ եւ արտօնութիւններ՝ հողատէրն իշխան եւ տէր իր սահմաններուն՝ իբր փոքրիկ

միահեծան մը կ'իշխէր հոն: Այս սահմաններն Փրանսա կ'անուանէին seigneurie, Անգղիա manor, Գերմանիա Grundherrschaft:

Իբր երկրորդ էական կէտ աւատական դրութեան՝ կը շեշտուի այն աստիճանական միութիւնը, որով մարդիկ իրարու հետ կը կապուէին: Սոյն կապը, կարելի է անուանել «վասսալական» (vassalle), այսինքն «ճորտական» միութիւն: Փոքրիկ ճորտերը՝ յատուկ պայմանագրերով բարձրագոյն ճորտերու հովանաւորութեան տակ, ունէին իրենց գիւնտերական եւ ուրիշ ծառայական պարտականութիւնները, այսպէս աստիճանաբար՝ ամենաբարձրագոյն պետերն ու իշխաններն իրենց կարգին՝ ունէին որոշ պարտականութիւններ արքայի հանդէպ: Վերը դրուած երկու կէտերը՝ աւատական դրութեան էութիւնը կը պարզեն, դրութիւն մը, որուն վրայ հիմնուած էր ամբողջ Միջնադարեան Եւրոպան:

Յետագայ շորրորդ հատուածը (32—90) նիւթ ունի հայ նախարարութիւնը: Հիմնուելով մատենագրական աղբիւրներու տուեալներուն վրայ, հեղինակը կը ներկայացնէ նախարարական դասը եւ հայ նախարարութեան էութիւնը. ուսկից հետեւեալ եզրակացութեան կը հասնի. Ազնուականներու բարձր դասը՝ համապատասխան Միջնադարեան Եւրոպայի «seigneur»ներու, հայ հնագոյն աղբիւրներու մէջ կը կոչուին «նախարար», «նախարարագլուխ», «ազգ», «տոհմք կամ տունք նախարարաց»: Ինչպէս Եւրոպայի մէջ աւատական դրութեան բարձրագոյն ճորտերն էին «seigneur»ները, նոյնպէս նախարարները Հայաստանի մէջ:

Առաջին անգամ անգղիացի Ջիրբըն նշանաւոր գիտնականն էր ԺԸ. դարուն, որ կարծիքը յայտնեց թէ՛ աւատականութիւնը արդէն Արշակունիներու ժամանակ գոյութիւն ունեցած ըլլայ¹: Առաջին բնական խուզարկուն, հայ աւատականութեան ծագման, եղաւ Նիկ. Ազոնց²: Իսկ Մանանդեան համառօտիւ անցնելով ծագման մասին յայտնուած կարծիքներէն, կը ծանրանայ մասնաւորապէս նախարարական կազմակերպութեան շուրջ:

¹ E. Gibbon, The history of the decline and fall of the Roman empire, ed. by Bury, London 1900, I, p. 203—204. Տես նաեւ A. Harnack, Die Mission und Ausbreitung des Christentums in den ersten drei Jahrhunderten. 2. Aufl. Leipzig 1906, II. Band, p. 170: „Als nun Armenien — übrigens ein Feudalstaat mit einem mächtigen Adel und einer reichen Priesterschaft.“
² „Армения в эпоху Юстиниана“ (СПБ. 1908).

Հին Հայաստանի աւատականութեան աստիճանական զարգացման սանդուղը հետեւեալ կերպով կը կազմէ . կային չորս բղէշսութիւններ, որոնք Հայաստանի սահմաններու վրայ ընդարձակ երկիրներու տէր էին . կոչուած «սահմանապահ», «սահմանակալ», «կողմնակալ», ասոնք են Աղձնեաց, Գուգարաց, Նոչիրական, Ծովաց բղէշսութիւնները : Յաջորդաբար ծագում առած են . դքսութիւններ (duchés), կոմսութիւններ (comtés), պարոնութիւններ (baronnies), գերակոմսութիւններ (vicomtés) :

Հայ նախարարութիւնները շայն իրաւունքներով օժտուած, իբր անկախ ինքնուրոյն իշխանութիւններ, միանգամայն հայ Արշակունիներու գերիշխանութեան տակ, ունէին թագաւորի հանդէպ իրենց պարտականութիւնները . հայրենիքը վտանգուած պահուն զինուորական ոյժ եւ ուրիշ ազնիւ ծառայութիւններ : Արշակունեաց ժամանակ ամբենարարձր գործակալութիւններու պաշտօնեաներն էին՝ նախարարութիւններն, ինչպէս են «թագակապ ասպետութիւն», «մարզպետութիւն», «մարտապետութիւն», «սպարապետութիւն», «հազարապետութիւն» . իսկ մեծ դատաւորութիւնը կաթողիկոսութեան ձեռքն էր :

Յաջորդ Ե . Ը . դրուիններու կ'ուսումնասիրուին հետեւեալ կէտերը . «ազատ»ները եւ «ոստանիկ»ները (90—126) . եկեղեցական դասը իբր ազատաց տոհմ (126—148) . «չինական»ներն եւ «ոսմիկ»ները (148—212) . քաղաքներն ու անոնց բնակչութիւնը, արուեստաւորներն եւ սարուկները (212—241) : Եկեղեցական դասին վրայ եղած քանի մը ակնարկութիւնները նկատողութեան արժանի են : Կը գրէ Մանանդեան՝ «Միջնադարեան Եւրոպայում Ֆեոդալական աշխարհիկ կարգերը եւ Ֆեոդալականացման զօրեղ հոսանքը խորապէս ազդել էին քրիստոնէական եկեղեցու զարգացման վրայ, տալով նրա վարչական ու ակնտեսական կազմակերպութեանը ֆեոդալական ձևակերպում եւ յատուկ գունաւորում» : Եթէ Մանանդեան այս խօսքերով կ'ուզէ եկեղեցական «benefice»-ը ակնարկել, այն համոզմամբ թէ անոր ելակէտն Եւրոպայի աւատական գրութիւնն ըլլայ, հոս համամիտ պիտի չկարենանք ըլլալ հեղինակին : Եկեղեցական վարչական ու տնտեսական կազմակերպութիւնը՝ դարերու ընթացքին կամաց կամաց եկեղեցու ներքին պայմաններէն բխելով գոյութիւն առած է . բնական է արտաքին պարզաներն ալ իրենց որոշ դերն ու ազդեցութիւնը ունէին, նոր զարգացման վիճակի մէջ գտնուող եկեղեցու վրայ : Սակայն եկեղեցական «benefice»-ը որչափ ալ արտաքին նմանութիւն մ'ունենայ աւատականութեան, արգիւնք մը չէ նոյնին . ընդհակառակը, մինչութեան դարու սկիզբը արդէն եկեղեցական «benefice»-ը գոյութիւն ունէր . Ֆեոդալական կազմակերպութիւնը Եւրոպայի մէջ արգիւնք դարու կիսէն ետքը դեռ նոր սկիզբ կ'առնէ³ :

Հողեւորականութիւնը Հին Հայաստանի մէջ կը ներկայանայ առանձին դաս մը ազնուականներու շարքին : Տրդատ թագաւորի պարզեաներով մեծ կալուածներու տէր եկեղեցականութիւնը ունէր մեծ արտօնութիւններ ինչպէս նաեւ դատաստանական իրաւասութիւն :

Այնուհետեւ կը դառնայ հեղինակը Հայ աւատականութեան ծագման եւ տեւողութեան (226—266) : Մերժելով Նիկ . Աղոնցի կարծիքը, որ Հայ աւատականութեան դրութեան ծագումը Տիգրան մեծի ժամանակը կը դնէ, ինքն նախորդ աւելի հնադոյն, այսինքն նախարարական շրջանը կ'ենթադրէ, իսկ քայքայումը ԺԴ . ԺԵ . դարերուն : Այս քայքայման նպատակ է Հայ Արշակունիներու եւ կենդրոնախոյս նախարարութիւններու պայքարը (267—280) . որ Արշակունեան հարստութեան վերջնապէս ետքն ալ շարունակուեցաւ, այժմ պարսկական եւ բուղանդական տէրերու դէմ ուղղուած (280—304) : Հայ աւատական գրութեան, տեղական ինքնուրոյն առանձնայատկութիւններէն (304—320) ուշադրութեան արժանի է այն, որ բացի աւատականութեան թէ՛ զարգացման եւ թէ՛ քայքայման պարագաներու տարբերութենէն, որ Եւրոպայի եւ Արեւելքի մէջ գոյութիւն ունեցած են, Հայ նախարարական հողերը պայմանական չէին : Նախարարները աղիկամի իշխանութիւն ունէին իրենց երկիրներու վրայ, որով նախարարական իշխանութիւններու կախումը ոչ թէ հողային այլ պարզ ճորտական «վասալական» եղած է :

Որչափ ալ հեղինակը աշխատութեան մէջ տեղ տեղ ստիպուած է նուազ կամ առաւել հաւանական ենթադրութիւններէ առաջնորդուիլ, բայց կոխած գետինը երբեք չի կրնար

³ Dr. P. K. Hohenlohe, Grundlegende Fragen des Kirchenrechtes. Wien 1931, S. 80—118, Ursprung des Benefizialwesens.

նկատուիլ . նա ունի զօրաւոր մատենագրական ապացոյցներ : Դիւրահասկնալի արտայայտութեան եղանակը զրքիս առաւելութիւններէն մին է : Մանանդեան այս աշխատութեամբ գնահատելի ծառայութիւն մը կը մատու-

ցանէ Հայ տնտեսութեան զարգացման պատմութեան : Հայ պատմագրութեան սքողուած, չհաստատուած տեղիքները լոյս, իմաստ, արժէք կը ստանան իր գրչին տակ :
Հ . Մ . ԱԳՆԱՆ

Resumé der wichtigsten Abhandlungen.

Firdausi und Moses Chorenatzi. Von A. Saroukhan. Sp. 1—24, 176—185.

Der Verfasser gibt zunächst einen Überblick über Firdausis Lebensgang und sein Königsbuch. Folgt eine Zusammenstellung jener Stellen, wo der persische Dichter Armeniens Land und Volk erwähnt, dann untersucht er besonders die Tragweite der Einflüsse der iranischen Sagen über Moses Chorenatzi. Demnach haben die Sagen den Fürsten Sahak Bagratuni begeistert, Moses den Auftrag zu geben, nach den einheimischen Sagen die Geschichte Armeniens zu verfassen. Moses führt in seiner Geschichte einzelne iranische Sagen an, weiß sie zu bewerten oder kritisiert gar deren Wahrhaftigkeit. Der Verfasser vergleicht die entsprechenden Stellen mit Firdausis Angaben Biuraspi Aždahak-Sohak, Hridun-Feridun, Simorgh-Arcruni, Rostamsage, Sohrab-Artasēs und Sa'tenik usw. Im zweiten Aufsatz bespricht der Verfasser die neue Erivaner Veröffentlichung über Firdausi. In einem Anhang wird die Firdausi-Ausstellung in der Nationalbibliothek zu Paris beschrieben.

Der Katholikos Avetis von Etschmiadzin (1594—1623?). Von P. N. Akinian. Sp. 24—33.

Arakel von Tauris erwähnt in seiner Geschichte den Katholikos Avetis nicht. Die Zeitgenossen aber machen ihn unter den mehrzähligen Mitregenten des damaligen Katholikos David namhaft: Melchisedech, Avetis und Serapion-Gregor. Es sind authentische Dokumente, die die Existenz des Katholikos Avetis unstrittbar machen. Nach seinem eigenen Zeugnis war Avetis im Jahre 1601 in Konstantinopel; die Jahre 1603 bis 1612 verbrachte er in Armenien. Im Jahre 1613 wurde Avetis nach Jerusalem eingeladen, wo er am 13. April den Gregor zum

Erzbischof von Jerusalem weihte. Er starb wahrscheinlich um 1623 in Georgien. Seine Wahl zum Koadjutor mit dem Titel eines Katholikos soll um 1594 fallen.

Der Wardapet Sargis von Kafa, Vikar des armenischen Patriarchen und Prior des Klosters hl. Antonius (1428—1448). Von P. N. Akinian. Sp. 33—44.

Zum erstenmal im Jahre 1428 tritt Sargis in der Geschichte auf. Er kam nach Kafa, wahrscheinlich aus Kilikien, als Vikar des armenischen Katholikos Konstantin und schlug seinen Sitz am verlassenen Kloster des hl. Antonius bei Kafa auf. Er renovierte das Kloster, sammelte Mönche um sich, errichtete dort einen Lehrstuhl und lehrte selber. Die Zeitgenossen preisen seine Tätigkeit mit Anerkennung. Im Jahre 1438 wurde er als Delegierter des armenischen Katholikos Konstantin mit Vollmacht nach Florenz gesandt, um dem ökumenischen Konzil beizuwohnen. Er unterschrieb die vom Konzil für die Armenier bestimmten Beschlüsse. Nach seiner Rückkehr weilte er weiter in Kafa. Hier begegnete ihm Mkrtitsch Naghasch, Bischof von Amid, und bekam von ihm ein von Papst Eugenius IV. geschenktes Kreuz zum Andenken. Sargis' Todestag ist nicht angegeben. Ihm schreibt der Verfasser ein dem Nationalhelden Liparit gewidmetes Lied zu, das auf S. 43—44 veröffentlicht wird.

Belgien und die Armenier. Von A. Saroukhan. Sp. 70—78, 113—123.

Der Verfasser untersucht die wechselseitigen Beziehungen zwischen Belgien und Armenien. Die ältesten Spuren der Armenier in Belgien tauchen im 9. Jahrhundert auf: Macarius, der armenische Bischof von Anti-